ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյումրի համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը իրականացնելու, գործընթացի կառավարման հանձնաժողովի՝ ներկայացված առաջարկ-նախագծերի քվեարկության փուլի ամփոփում

ք.Գյումրի 02.07.2024թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լուսինե Սանոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լևոն Բարսեղյան, Գևորգ Մելիքյան, , Վարդևան Հակոբյան, Կարեն Մալխասյան

1. Հանձնաժողովի աշխատանքների ադմինիստրատիվ և կազմակերպչական մասը, ինչպես նաև նիստերի արձանագրումը ապահովելու համար հանձնաժողովի քարտուղար է ընտրվել հանձնաժողովի անդամ Լենա Մխիթարյանը:

2. Ընդունել ի գիտություն, որ ս/թ հունիսի 05-25 ընկած ժամանակահատվածում պաշտոնական կայքում քվեարկության ներկայացված հետևյալ առաջարկ-նախագծերը ստացել են հետևյալ քվեները.

N	*Առաջարկ-նախագծի անվանում*	*Հեղինակի անուն ազգանուն*	*Քվեների քանակը*
1	*Տան պայմաններում պահվող շների մարզման և զբոսանքի համար նախատեսված այգու կահավորում*	«Արդինի» հիմնադրամ Քրիստինե Սարգսյան	35
6	*Գյումրու կանայք.Խաղաղության մեխանիկա: Պատկերապատում /կոմիքս/*	Գոհար Սմոյան	45
7	*Հասանելի խաղահրապարակ-պուրակ բոլորի համար*	«Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ	194
9	*Էկո խաղահրապարակի կառուցում*	Սուրիկ Խոսրովյան	2
10	*Գյումրվա ցուցանակներ Կումայրի արգելոցի փողոցների համար՝ պատրաստված վարպետի ձեռքով*	Արտուշ Միքայելյան	8
11	*Մուշ-2 թաղամասի բակային խաղահրապարակների հիմնանորոգում*	«Արաքս կենտրոն» բարեսիրական ՀԿ Գոհար Գալստյան	215

14	*Ռ տառը հատուկ կարնո բարբառի գյումրվա խոսվածքի համար ստեղծվել է 2019 թ. Մկրտիչ Մաթեւոսյանի կողմից հայոց այբուբենում եւ առաջարկվում է այն քանդակի տեսքով տեղադրել Գյումրու քաղաքային միջավայրում, որպես գյումրու բարբառի հուշարձան-խորհրդանիշ:*	Մկրտիչ Մաթևոսյան	26
16	*Արևային էներգիայով աշխատող լիցքավորիչներ՝ USB հնարավորությամբ, որոնք կտեղադրվեն Գյումրի քաղաքի 7 վայրերում:*	Ամալյա Թումասյան	9

3. Հաշվի առնելով վերոգրյալը՝
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝
Գյումրի համայնքի 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացում հաղթող ճանաչել «Արաքս կենտրոն» բարեսիրական ՀԿ-ի կողմից առաջարկված «Մուշ-2 թաղամասի բակային խաղահրապարակների հիմնանորոգում» առաջարկ-նախագիծը, որը քվեարկության արդյունքում ստացել էր առավելագույնը ՝ 215 քվե:

2. Հաղթող ճանաչված առաջարկ-նախագիծը փոխանցել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը կամ մասնագետին՝ հետագա մշակման համար և իրականացնել՝ պահպանելով գնումների մասին օրենսդրության և այլ նորմատիվ ակտերի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 , դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ **Լուսինե Սանոյան**

Հանձնաժողովի անդամներ՝

Լևոն Բարսեղյան

Գևորգ Մելիքյան

Կարեն Մալխասյան

Վարդևան Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ **Լենա Մխիթարյան**